

ուր ամբողջ ծախքին հաշիւն ընելու նստած է այն որ աշտարակի մը շինութեան կը ձեռնարկէ :

Յիսուսի վարդապետութենէն ո՞րքան հեռու ըլլալու են գործնական, կենդանի եւ ամէնօրեայ սկզբունքներն այն ժամանակներուն, երբ մարդ կրնայ իր եղբայրակիցներուն մէջտեղ կայնիլ եւ ըսել թէ ամէն մարդ իր գինն ունի: Աշխարհի մէջ սկզբունքի այնչափ նուազութիւն կայ որ ճշմարտութեան երեւոյթ կ'առնէ այդ խօսքը: Բաւական ալ մարդիկ կան որոնց կարծիքն իրենց անձերուն դնոյն վրայ այնչափ վար է որ կը հաւատան եւ արձագանք կու տան այդ խօսքին: Երբ մարդու մը գինն հարցնէք, ոսկիի եւ արծաթի հաշուով պատասխան մը կ'ընդունիք: Կը տեսնէք թէ երբեմն այդ կշռով կը ներկայացուի հոգիներու արժէքը: Գործի մէջ մասնաւոր պատիւ կ'ընծայենք այն մարդուն որ կարող է ապրիլ առանց երբեք կասկածի ենթարկուելու: Մասնագիտութիւններու մէջ մարդոց կարծիքները եւ խիղճները կրնան գնուիլ ու ծախուիլ, պայմանաւ որ գինը բաւական բարձր, գործողութիւնը բաւական կնճռոտ եւ փորձութիւնը բաւական նրբին ըլլայ որ մեղքը հանրութեան աչքին չերեւի, կամ հնար ըլլայ քիչ մը իմաստակութեամբ ջատագովել զայն:

Արտին մէջ այսքան համարձակ մեծցող այս որոմներուն մէջտեղ պատուական հունձքը կայ ցորենին, որ ցանուած է Որդւոյ մարդոյ ձեռամբ: Կան հազարաւոր մաքուր հոգիները, որոնց այդպիսի փորձութիւններ կարող չեն ազդել, որոնց կեանքերը «պահուած» են «Աստուծոյ քովը Քրիստոսի հետ», եւ որոնք, երբ կշռուու եւ մաղելու ժամանակը գայ, պիտի ժողովուրին շտեմարանները: Աստուծոյ են աշխարհի քաջակրօնական, ապագայի յոյսի աղբիւրը: Բայց աշխարհը, աշխարհը, ինչպէս պիտի ազատուի այն ցած գինէն զոր ինք իրեն կ'ընծայէ: Պէտք է անոր հասկնել հոգիի արժէքը, հոգիի գինը, հոգիի անմահութիւնը:

Այս է հարցումը զոր ներկայ ժամանակը կ'ուզէ ամէն մարդու եւ կնոջ: Եւ այս հարցման արուած պատասխանին համաձայն պիտի դատուինք երկնից մէջ ու երկրի վրայ: Երբ իրական փորձի ժամն հասնէր, պիտի յօժարէիք լրջօրէն հրաժարիլ ձեր ամէն, ամէն ունեցածներէն, եթէ համոզուէիք որ Աստուծոյ առջեւ ձեր հոգիին մաքրութիւնը այդ հրաժարումէն կախեալ է: Պիտի յօժարէիք լրջօրէն, երբ իրական փորձի ժամն հասնէր, հրաժարիլ ձեր համբաւէն, ձեր գործէն, ձեր տունէն, եթէ համոզուէիք որ Աստուծոյ առջեւ ձեր հոգիին մաքրութիւնը այդ հրաժարումէն կախեալ է: Պիտի յօժարէիք, լրջօրէն, Որդւոյ մարդոյ նման ըլլալ եւ շրջիլ ձեր գլուխը գնելու տեղ մը չունենալով: Պիտի յօժարէիք աղքատ, յիտին աստիճան աղքատ ըլլալ: Պիտի յօժարէիք դիմադրաւել աշխարհի ծաղրին ու անարգանքներուն: Պիտի յօժարէիք, լրջօրէն, ձեր բարեկամները կորսնցնել ձեր շարժապիթներուն սխալ իմացուելուն պատճառաւ, եթէ համոզուէիք որ Աստուծոյ առջեւ ձեր հոգիին մաքրութիւնը այդ յանձնառութենէն կախեալ է: Պիտի յօժարէիք համբերել այս խաչին եւ անարգել այս ամօթը, եթէ միայն այս կերպով կարող ըլլայիք հասնիլ երկնից երանութեան: Այս ամենէն վեր եւ բարձր կը համարէք ձեր հոգիին արժէքը եւ անոր համար վճարուած գինը: «Զիս ատոնցմէ աւելի կը սիրեմս:»

Բանի մը արժէքին մէկ չափանիշը անոր համար վճարուած գինն է: Ինչ որ ամենէն սուղի կը նստի՝ ամենէն աւելի կը յարգուի եւ յարգուելու է: Դուք քանի՞ նստաք: Ինչ գին վճարուած է ձեր գոյութեան համար: Արդար եւ կարելոր հարցումներ են ասոնք զոր ամէն մարդ իր անձին ուղղելու է: Այդ հարցումներուն միջոցաւ կը գտնէ կամ կ'որոշէ նա իր գանձերուն արժէքը: Այս ինչ բանն ստանալու համար ինչ տուած, ինչ կրած եմ: Զոր օրինակ, ունիք գեղեցիկ հին կարասի մը, չորս հինգ սերունդի ձեռքէ անցած, ճոխապէս զուգորդուած՝ ընտանեկան աւանդութիւններու հետ: Կարծես անցեալ ժամանակներու բոլոր եւ շունչը ունի: Կը պանծաք անով: Զեր ընտանեկան կեանքին, կենցաղին եւ համբաւին վրայ կարելոր ազդեցութիւն մը կ'ընէ: Ինչպէս կը հաշուէք անոր արժէքը: Ինչ եղած է անոր ծախքը: Հաւանօրէն կար ժամանակ մը, երբ չորս սերունդ առաջ, երբ տունին ամենէն լաւ կարասին էր այն: Մեծ զոհողութեամբ գնուեցաւ եւ խոշոր սենեակին մէջ դրուեցաւ: Ընտանիքին ամբողջ կեանքը անոր շուրջ կեդրոնացած կը թուէր, եւ ամէն սերունդի կողմէ յաւելուածական զոհողութիւն մը եղած է զայն պահպանելու համար: Սերունդներու գուրգուրանքը կեդրոնացած է անոր վրայ, եւ ձեզ հին ժամանակներու հետ կապող կենդանի օղակ մը եղած է: Բոլոր այս զգացումները անոր գնոյն մաս կը կազմեն:

Երէկ քաղաք երթալու պահուն կառքին մէջ նստաք այնպիսի մարդու մը քով, որուն ներկայութիւնը զգուանք ազդեց ձեզի: Այնչափ գծուծ, այնչափ անարգ կ'երեւէր: Կրնայիք անոր դէմքին վրայ ամէն շոր կիրք գրուած տեսնել: Իր ամէն ակնարկը ձեր մէջ կասկած արթնցուց: Կը յիշեցնէր մտութեան այն կեդրոնները, ուր անշուշտ կը յաճախէ նա: Ինչպէս հաշուեցիք այդ մարդուն արժէքը: Դրի՞ք զայն եղբայրութեան այն նոյն սքանչելի մակարդակին վրայ ուր Յիսուս պիտի գնէր զայն: Տեսա՞ք անոր մէջ նուազման եւ մարկու մօտ բայց դեռ կենդանի հոգի մը: Պիտի յօժարէիք ճիշտ հոն անմիջապէս հրաժարիլ ձեր գեղեցիկ եւ վաղնջուց կարասիէն, անոր բոլոր ընտանեկան պատմութենէն, եթէ զգայիք որ այդ մեծ զոհողութեամբ պիտի կրնաք փրկել այն մարդուն հոգին եւ դարձնել զայն Աստուծոյ, իր Արարչին: Պիտի ըսէք թէ արժէքներու այս բաղդատութիւնը չեղաւ: Անհեղեղ խօսք է ըսել թէ հոգի մը կրնայ գնուիլ այսպիսի տուրքով: Այո, բայց այս չէ՞ ճիշտ արժէքներու այն բաղդատութիւնը, որ ամէն օր տեղի կ'ունենայ սակարանին մէջ, զրասնեակին մէջ, պետական եւ նոյն իսկ եկեղեցական գործերու մէջ: Սա տարբերութիւնը միայն կայ որ հիմա կը նայինք մենք այդ սակարկութիւններուն միւս կողմը, ուր կրնանք տեսնել անոնց խաբէութիւնը եւ խայտառակութիւնը:

Հիմա մեր ուշադրութիւնը դարձնենք այն տարրերէն ոմանց որոնք կը գտնուին մարդու մը գնոյն մէջ: Յոյս չունիմ մարդկային բնութեան ամբողջ վերլուծումն ընելու եւ զայն իր ամէն կողմերովը քննելու, այլ միայն քանի մը կէտեր թիւադրելու:

1. Մարդը +անի՞ նորո՞ք է աշխարհի: Նախ զայս իմանանք: Քիսմովի գիտենք որ ամէն ստեղծուածները մինչեւ հիմա մէկտեղ կը հաւաքեն ու ծնանելու ցտւ կը քաշեն: «Աս-

տուծոյ որդւոցը յայտնուելուն» սպասելով: Դարերու բոլոր աւանդութիւնները եւ մտածութիւնը մեր վրայ կեդրոնացած են: Անբնականայելի թուով սերունդներու արտադրութիւններն ենք մենք: Առանց այդ դարերուն անհաշուելի աշխատութեան եւ տքնութեան, ճիգերուն եւ ողբերգութիւններուն, գոյութիւն պիտի չունենայինք մենք: Ինչպէս բուսնող ամէն տունկ իր պարզ գոյութեան համար պէտք ունի երկրի, օդի, երկնից, արեւի, եւ բնութեան բոլոր այն օրէնքներուն որ իրեն նպաստաւոր են, նոյնպէս իւրաքանչիւրս պտուղն ենք բոլոր անցեալին մեծ գործողութիւններուն: Եւ եթէ մէկ սերունդ աշխարհի նկատմամբ իր պարտականութիւնը նուազ խղճով եւ հաւատարմութեամբ կատարէր, մենք տարբեր պիտի ըլլայինք: Եթէ բնութեան մէկ օրէնքն անշուշտ ըլլար իր դերը կատարել վճռական պարագայի մը մէջ, բնաւ գոյութիւն չէինք ունենար: Նմանապէս մտքի եւ մարմնի ամենապարզ գործողութիւնն իր մէջ կը կրէ անցեալ արարածներու բոլոր աշխատութիւնը: Ամէն պարզ օգուտ զոր կը քաղենք բնութեան օրէնքներէն՝ կը նշանակէ թէ մեզի համար, թէեւ չենք զգար, գիտութեան մեծ վարպետներն աշխատած են: Մտածութեան ամէն ճշմարիտ եւ ճշգրիտ գործողութիւն կ'օգտուի անցելոյն մեծ խորհողներէն: Այդ հսկայ իմացականութիւնները մաքրաւ են այն խնդիրներուն հետ զորս աշխարհ իրենց ներկայացուցած է: Յաղթահարած եւ դրած են զանոնք ամենէն հասարակ իմացականութիւններուս ոտքը, այնպէս որ հիմա ամենուս սեփականութիւնն են անոնք: Բայց այն հին եւ հսկայ իմացականութիւններուն համար ինչ մեծ էր պայքարը: Ուստի արժէքը զոր դուք ձեր անձին կ'ընծայէք՝ չափուելու է գնոյն այն բաներուն, զորս ժառանգած էք բոլոր անցեալէն:

Առէք մեր քրիստոնէական ամենէն հասարակ հաւատալիքներէն մին միայն, եւ տեսէք թէ աշխարհ ինչ աշխատութեամբ եւ զոհողութեամբ ձեռք բերած եւ մեր արամադրութեան տակ դրած է զայն: Զոր օրինակ, մեր հիմնական հաւատքը Քրիստոսի Աստուածութեան վրայ: Մին է այն անգին գանձերէն որ կը նպաստեն մեր մարդկութեան: Ատոր լուսով կը յաղորդենք տեսնել այն խորին սէրը զոր Աստուած ունի մարդկային ազգին վրայ, տեսնել զոհողութեան արժէքը, եւ մեր իսկ բնութիւններուն բարձրութիւնը, խորութիւնը, երկայնութիւնը եւ լայնութիւնը: Սակայն միթէ «առանց ստակի եւ առանց գնոյ», առանց պայքարի, առանց սրտի ցաւի եւ զոհողութեան ձեռք բերուեցաւ այն: Եթէ քննէք վաղեմի եկեղեցւոյ պատմութիւնը Գողթթթայի մեծ դէպքէն սկսելով մինչեւ Նիկիոյ ժողովը, պիտի գտնէք զուրք ձեզ աշխարհի մասնողներուն ամենէն ահեղ պայքարներէն միոյն առջեւ: Ապա շարունակեցէք ձեր քննութիւնը այն ժամանակէն մինչեւ ներկայ ժամանակ: Տեսէք թէ ինչ սաստիկ յարձակում կրած է այս վարդապետութիւնը, եւ ինչ լուրջ հաստատամտութեամբ պայտպանուած է: Աշխարհ իր ամենէն աղէկ մարդոց մէկ քանին անոր նուիրած է: Օրերով, գիշերներով մտածութիւն, խորհրդածութիւն եւ սրտի քննութիւններ շատ բարձր գին մը չեն եղած, կեանքեր զոհուած են անոր համար: Հիմա տաք տաք կ'ընդունինք զայն իր անցեալ մեծ ջատագովներուն

չըթուենքէն եւ կը իւրացնենք : Մեր բնու- թիւններն անով կը ճոխանան : Մեր կեանք- քերն անով կը լաւանան : Բայց հաշուեցէք զինքն եւ նայեցէք թէ արդեօք ձեր կեանքին յարգը չէ՞ աւելցած չնորհիւ աշխարհի բո- լոր այն զոհաբերութիւններուն, որոնց պատ- ճառ եղած է այս մէկ հաւատքը :

Ապա եթէ անէք ուրիշ հաւատք մը, ու- րիշ խորհուրդ մը՝ ձեզ ազնուացնող եւ լա- ւացնող, պիտի գտնէք թէ զայն ձեր կեանք- քին հասարակ մէկ մասն ընելու համար սերունդներ մաքառած եւ արիւն թափած են : Մեր կեանք- քերը ճոխացնող ամէն ուրախութիւն՝ զայն ի գոյութիւն բերող զփոշակ փորձառու- թիւններու պտուղ է, ինչպէս վարդը ծնունդ է այն կեանքին որ խոնաւ գեանէն վեր կը հոսէ իր իսկ փուշերու անառիկ մէջէն : Կեանքին յարգն հաշուելու չե՞նք ուրեմն այն գնով, զոր աշխարհ վճարած է զայն արտադրելու համար :

2. Մարդն իրեն խոսքի նոյնքն է : Ըսել կ'ու- զեմ, իրական մարդը, ոյժի, նկարագրի, սիրոյ, գորովի եւ կորովի տէր մարդը : Եթէ մէկը աւելցուցած է արժէքն այն հոգիին զոր Աստուած զրկեց աշխարհ, աւելցուցած է՝ զոհողութիւն մը ընելով : Եթէ մէկը չորս ըրած է երկու տաղանդը զոր վարդա- պետէն ընդունեցաւ, աշխարհի առեւտրա- կան ազմկալից եւ կոշտ շուկաներուն մէջ թափած ճակատի քրտինքովն ըրած է այդ- պէս : Եթէ հոգիի մեծութեան հասած է, ծանր եւ անընդհատ աշխատութեան եւ զոհողութեան միջոցաւ հասած է :

Ահաւասիկ, օրինակի համար, մարդ մը որ մտքի մեծ անվրդովութիւն ունի : Յու- զումներու ճիշտ մէջտեղն անվրդով կը տես- նենք զայն : Երբեք չբարկանար, վրէժ չխնդրեր : Բացարձակ անզորութեամբ կ'անցնի բարկութեան ամենէն սուր փոր- ձութիւններուն մէջէն : Վրդովիչ ամէն կա- ցութեան մէջ տեսած էք զայն : Բայց ոչ մէկ անգամ կորսնցուց իր բնութեան հաւասա- րակութիւնը : Վերջապէս կը սկսիք ըսել թէ անոր դիւրին է այդպէս ըլլալ : Այո, հիմա դիւրին է : Բայց զիտէք թէ ինչպէս ստացաւ այդ բնութիւնը : Դիտէք թէ ո՞ր- չափ բան տուած է իր մեծութեան այդ միակ յատկութեան համար : Դիտէք թէ այդ քանիի՞ նստած է անոր : Հանդարտու- թեան այդ ունակութիւնը կազմելու առա- ջին փորձերուն մէջ անհղ մաքառումներ ու- նեցած է : Այն ատեն միշտ չէր յաղթեր նա իր անձին : Երբեմն տեղի կու տար բարկու- թեան կիրքին եւ սանձը կը ձգէր ձեռքէն : Բայց կոռուած ու կոռուած է մինչեւ որ սոր- ված է յաջողութեան մեթոտը, եւ Աստու- ծոյ օգնութեամբ յաղթանակ կանգնած է իր բնութեան վրայ : Ի ծնէ չունեցաւ այդ անզորութիւնը : Դիւրագրգիռ եւ բարկա- ցոտ բնութիւն մը ժառանգեց ամէն մարդու պէս : Աւելի քան հինգ անգամ խայտա- ապուրեցաւ իր պարտութեամբ : Ծեծուեցաւ իր փորձութեան գաւազաններով : Քար- կոծուեցաւ իր ընկերներուն արհամարհանք- ներով : Ծառ անգամ ընկղմեցաւ յոյսը զոր ունէր յաղթանակելու մասին : Յորեկ մը եւ դիշեր մը անցուց իր յուսահատութեան անդունդին մէջ : Կրեց քաղաքի մէջ վտանգ- ներ, անապատի մէջ վտանգներ, սուտ եղ- քայրներու մէջ վտանգներ, Վանքի ու աշ- խատութեան մէջ, շատ անգամ քնահատու- թեան մէջ : Բայց հիմա կը տեսնէք զինք աշխարհակալ եւ աւելի քան աշխարհակալ :

չնորհիւ անոր որ սիրեց զայն : Ո՛հ, պատուա- կան եւ օգտակար ձեռնարկ է անցնիլ մար- դու մը բնութեան ճակատավայրերէն եւ տեսնել թէ ո՞ր պայքար մղեցին փրտանեան ոյժերը եւ, եթէ հնար է, հաշուել վերջնա- կան յաղթութեան ծախքը : Կ'ըսենք թէ ժո- ղովուրդ մը նուիրական եւ պատուական կ'ըլլայ իրեն համար զոհուած կեանքերուն գնով : Ո՞րչափ աւելի ուրեմն անհաշուելի կ'ըլլայ մարդու մը յարգը այն մեծագոյն պայքարներուն բերմամբ, որոնց միջոցաւ ձգնած է փրկել իր անձը : Եւ երբ կը դիտէք մէկը եւ կը հիանաք իր մէկ առաքինութեան վրայ եւ կը փորձուիք ըսել թէ անոր դիւ- րին է բարի ըլլալ, ախարկ մը նետեցէք, եթէ կրնաք, անոր անցեալին էջերուն վրայ : Եւ անա ճակատամարտներով նոյնչափ խճող- ուած պիտի գտնէք զանոնք որչափ ունէ ժողովրդի պատմութիւն :

«Շատ ճնճղուկներէն լաւ էք դուք,» ըսաւ Վարդապետը, եւ «Ո՞րչափ աւելի է մարդը ոչխարէն,» Երբ կը տեսնենք մարդիկ որ այսպիսի պայքար, երկիւզ եւ զառնութիւն կրած են այն առաքինութիւններուն համար որոնք հիմա իրենց նկարագրին մաս կը կազ- մեն, կը հասկնանք թէ այդ խօսքով ինչ ըսել ուզեց, վասն զի անապատին քառասորեայ փորձութիւններու յիշատակարանին մէջ արձանագրուած մարդկային ամենէն խորին փորձառութիւններէն խօսեցաւ երբ Որդի Աստուծոյ կոչուելու իր իրաւունքը գնեց :

3. Փութանք ուրեմն հաշուել մարդուն արժէքը մէկ ուրիշ չափանիշով : Քանի՞ նոյն- նա Աստուծոյ : Միայն հոս կը հասնինք ճշմար- տագոյն եւ բարձրագոյն գաղափարին : Քանզի մարդու մը հոգիին արժէքին իրական չափը կը գտնուի անհունին մէջ միայն : Մարդ մը շատ սուղի կրնայ նստիլ աշխարհի, բայց այդ ամբողջ ծախքը հաշուելի է : Կրնաք ներկայացնել զայն աշխարհի իսկ արժէք- ներով : Մարդ մը կրնայ իր անձին շատ սուղի նստիլ : Բայց իր քնահատութեան եւ մաքառման օրերը եւ դիշերները վերջացած են եւ յոգնութեան տարիներն անցած : Սա- կայն ո՞վ կարող է ըսել, ո՞վ կարող է չա- փել, թէ մարդ մը քանիի՞ նստած է Աս- տուծոյ : Ո՞վ կարող է երկրային կամ երկ- նային հաշիւներով ներկայացնել արժէքն հոգիի մը որուն համար բան մը տուած է Աստուած : Ահա ունիք բան մը որ արժէքի ամէն հասարակ չափանիշէ վեր կը բարձ- րացնէ մարդը եւ կը դնէ զայն «Աստուծոյ աջ կողմը» :

Ամէնքս ալ ձանձցած ենք բարձր առաքի- նութեան տէր հայր մը, որուն լաւագոյն տեսնչն էր նայիլ որ իր որդին Աստուծոյ հա- մար կատարէր այն փառաւոր գործը՝ զոր սկսած էր : Քսան տարի սիրով եւ եռանդով աշխատեցաւ որպէս զի ձեւակերպէր տղուն կեանքը : Իր սրտին մէջ գաղափարական մը կայ զոր կը ջանայ թանձրացնել մարդկային մտի ու արեան մէջ : Բայց երբ աշխատու- թիւնը գրեթէ լրացած թուեցաւ եւ տղան չափանաս մարդ եղաւ, մէկ դիշերը բաւա- կան եղաւ կործանել զայն, եւ հօրը սիրտը անպատմելի վշտով մաշեցաւ : Ներշնչեալ մարդիկ երկնային գործառնութիւններու վրայ պատմութիւն մը ունին : Լսած ենք թէ Աստուած, ամենուս լաւագոյն Հայրը, սկիզբէն հետէ գաղափարական մը ունէր, իր նմանութիւնն արտադրել մարդոց մէջ : Դարաւոր գործողութիւններով աշխատե- ցաւ : Ամենէն կոշտ քարէն սկսելով գործեց անընդհատ, հոս եւ հոն դպչելով եւ ամէն

բան ձեւակերպելով մի միակ նպատակաւ : Ապա մարդը, երբ կատարեալ եղաւ կամքի տիրացմամբ, ինկաւ Աստուածային գաղա- փարականէն : Եւ ինչպէս կարող ենք չա- փել Աստուծոյ կարեկցութիւնը, վիշտը, անձկութիւնը : Մարդուն արժէքն հաշուել առնելու պահուն ասոնք ալ ինկատ առ- նելու էք :

Ահա եղբակացութիւնները որոնց հասանք : Մէկ նժարին մէջ կայ մարդու հոգին : Միւ- սին մէջ գրէք մաքառումներն այն սերունդ- ներուն որոնց ժառանգութեան հաղորդ եղած է : Չարժիր նժարը : Դրէք նաեւ ճիգերը զոր մարդը թափած է բարի ըլլալու համար, իր պայքարները եւ առաքինութիւնները : Տակաւին չարժիր նժարը : Դրէք Աստուծոյ յաւիտենական խորհուրդը եւ կարեկցու- թիւնը, Արարչին դիտաւորութիւնը զայն իրեն նման ընելու : Տակաւին ծանր կը կշռէ մարդու հոգին : Դրէք Տէր Յիսուսի սի- բուն ծառայութիւնը, անոր փորձութիւն- ները եւ յաղթութիւնները, անոր սէրն առ մարդ, Դրէք զԻեթեմանի իր տաղան- պով եւ արեան քրտինքով մէկտեղ, Դարձեալ չարժիր : Նժարն այն ատեն կը բարձրանայ եւ կը հաւասարակշռի միւսին հետ երբ, բո- լոր այդ բաներէն զատ, կը դնէ նաեւ Քրիս- տոսի խաչը : Եւ անա կ'ունենաք փրկուած հոգիի մը արժէքը, Աստուծոյ մարդու մը արժէքը, իր գնով չափուած :

Մէկ երկու պարզ դասեր կան : Առաջինն է մեղաց սարսափելի մեծութիւնը, մեղաց՝ որ ցեխի եւ տղմի մէջ կ'ընկղմէ զայն որ այնչափ սուղի նստած է աշխարհի, մար- դուն եւ Աստուծոյ : Ո՛հ, մեղքը սոսկալի իրականութիւն է այսօր : Եւ մենք յաղթե- լու ենք անոր : Երկրորդն է վստահութեան դասը : «Ուրեմն մի վախնաք, ինչու որ շատ ճնճղուկներէն լաւ էք դուք,» Աստուած հոգ կը տանի անոր որ այնչափ սուղի նստած է իրեն : Մի վախնաք, այլ միայն հաւատա- ցե՛ք : Եւ երբ մեղքը գայ եւ մեզ նուաս- տացնէ, եւ երբ վախնալ փորձուինք, եւ երբ ջանանք ուրիշ մարդոց արժէքը չափել, յիշենք մարդուն գինը, յիշենք թէ ինչպէս գնով ծախու առնուեցանք (Ա. Կոր. 2. 20) :

Գ. Ա. Ս. Տ. Բ. Ա. Կ. Ո. Թ. Ե. Ա. Ն. Գ. Ա. Ա. Փ. Ա. Բ. Ի. Ն. Ա. Ճ. Ո. Բ. Ը.

[Խմբագրական]

(2) Ա. Երեմիական Միացեալ Նահանգներու մը իրական գաղափարին զարթոյցումը Երբ դեռ Լէյտոնի համալսարանին իր ման- կութեան մէջ էր, այսինքն մէկ երրորդ դա- րու գոյութիւն ունեցած չէր, ազնիւ մար- դոց այն խմբակը որ քիչ յետոյ կազմեց Փիլիմըթի գաղթականութիւնը եւ տեւական հանգամանք ընծայեց Նոր Աշխարհի քաղա- քակրթութեան՝ ապաստանարան մը գտաւ նորահաստատ համալսարանին շուքին տակ, եւ 1620ին նուազ քան կէս դար առաջուան Լէյտոնցիներուն ոգուով՝ անտի մեկնեցաւ կրօնական, կրթական եւ քաղաքային հաս- տատութիւններ հիմնել Նոր Աշխարհին մէջ : Հիմա գիտենք, որպէս չէին կարող այն ա- տեն գիտնալ, թէ այն գաղթականները որ իրենց նոր կեանքն սկսան Մասսչուսեցի ցուրտ ձովեղերքին վրայ՝ ուղղութիւն եւ տեւականութիւն պիտի տային նոր ցամաքի մը զարգացման, եւ թէ այսօր աւելի քան երկուքուկէս դար առաջ իրենց ձեռքը հաս- տատուած կառավարութեան, ընկերային դրութիւններուն, կրթական սկզբունքնե-

ընդհանուր կազմակերպման ներքին
70,000,000 ժողովուրդ պիտի ապրէր մարդ-
կային ընկերութեան բարօրութեան նպաս-
տող ամէն բանով վերին աստիճան ճոխա-
ցած :

Այդ գաղթականներուն առաջին մտածու-
մը եղաւ զԱստուած պաշտել մաքրութեամբ
եւ պարզութեամբ, նաեւ պատրաստութիւն
տեսնել իրենց տղայոց եւ ապագայ սերունդ-
ներուն կատարեալ կրթութեան համար :
Մասաչուսեցի գաղթականութեան կառա-
վարութիւնը 1636էն իսկ, երբ թուով սա-
կաւ եւ աշխարհային բարիքներով աղքատ
էին, գոյէճի մը հիմնարկութեան յատակա-
գիծելը պատրաստեց : Քուէարկուեցաւ 400
Անգլ. ոսկի շնորհել գոյէճին շինութեան
ձեռնարկելու համար, 200 ոսկի վճարել 1637ին,
մնացեալն ալ երբ շինութեան գործն աւար-
տէր : Կառավարիչը եւ փոխ-կառավարիչը
գաղթականութեան ուրիշ տասն անդամնե-
րու հետ որ ամենէն ծանօթ եւ ամենէն
յարգելի անձնաւորութիւններն էին՝ այս
շինութեան պիտի հսկէին : Տեսէք թէ որ-
չափ փոքր խողովակի մը յառաջ եկաւ Ա-
մերիկեան ուսման եւ ուսուցման թեան
մեծ կազմին :

1638ին Պատ. Ճոն Հարվըրտ կտակով 700
Անգլ. ոսկի թողուց գոյէճին շինութեան
գործին, եւ գաղթային կառավարութեան
գումարման մէջ որ տեղի ունեցաւ հետեւ-
եալ Մարտ ամսուն մէջ՝ գոյէճը Հարվըրտ
Գոյէճ անուանուեցաւ, եւ տեղն ուր հաս-
տատուեցաւ այն՝ Բէյմպրիճ կոչուեցաւ
ի պատիւ Բէյմպրիճի համարարանին յԱնգ-
ղիա : Երբ Մ. Հարվըրտի կտակը ծանուց-
ուեցաւ, անմիջապէս աշակերտներու կարգ
մը կազմուեցաւ : Այս եղաւ գոյէճական եւ
համարարանական կրթութեան սկզբնաւո-
րութիւնը նոր Աշխարհի մէջ :

Գոյէճը տարուէ տարի կանոնաւորապէս
օգնութիւն ընդունեցաւ Մասաչուսեցի կա-
ռավարութենէն : Ուրիշ կտակներ ալ եղան
ի նպաստ անոր : Աշակերտներուն թիւը եւ
հաստատութեան ազդեցութիւնն աւելցաւ
հետզհետէ : Սակայն իր զարգացումը տա-
րիներու ընթացքին մէջ յառաջ տարուե-
ցաւ մանաւանդ անհատական նպաստներով
քան պետական օժանդակութեամբ : Իր տա-
րեկան հասոյթն այժմ Ամերիկեան սեւե-
գոյէճի եւ համարարանի հասոյթէն աւելի
է, այսինքն 30,000 Անգլ. ոսկի : Իր աշա-
կերտներուն այժմու թիւն է 2,000էն 3,000 :
Հարվըրտ Գոյէճ, այժմ Հարվըրտ Համարա-
րան, Միացեալ Նահանգներու միակ գոյէճը
եղաւ երկար ժամանակ : Սակայն վերջին
գարուն սկիզբները, այսինքն գրեթէ 200
տարի առաջ, սկսաւ ուրիշ գոյէճներու հաս-
տատումը : Առաջ այս հաստատութիւնները
քիչ աւելի էին քան լաւ Բարձր Դպրոցներ :
Կը հաստատուէին տեղային կառավարութե-
նէն անհատական նուէրներու եւ կտակնե-
րու օժանդակութեամբ : Կամ կը հաստատ-
ուէին նուէրներով եւ կտակներով եւ կ'ըն-
դունէին պետական նպաստներ : Իրենց յոյժ
ստուար մեծամասնութիւնը ծագում առին
Չանիւք եռանդուն, հաւատացեալ քրիստոն-
եաներու, որոնք կրթութիւնն ու ուսումը
կցեցին Աստուծոյ երկիւղին եւ յարգանքի
հետ հանդէպ իր յայտնութեան Գիրքին, եւ
որոնք ուղեցին իրենց որդիները թէ՛ իմաս-
տուն թէ՛ օգտակար ընել իրենց գարուն
մէջ : Անչէն երկրի մը մէջ այդ գոյէճներուն
հաստատումը մեծ անձնուրացութեամբ կա-
տարուած է անոնց հիմնարկուներուն եւ

վաղեմի ուսուցիչներուն կողմէ : Շատ ան-
գամ շատ քիչ կ'ըլլային ուսուցիչներուն
թուակները : Սակայն երբեմն այդ փոքր
թուակներն անգամ լիովին վճարելու բաւա-
կան միջոցներ չէին գտնուեր, եւ կրուած
ապահովները ճշմարիտ գիւցազնութիւն
ի յայտ բերին : Վերջին տարիներս Ամե-
րիկեան գոյէճներու եւ համարարաններու
թիւը եւ հարստութիւնն ահագին աճում
մը ունեցան :

Սկիզբէն մինչեւ հիմա Միացեալ Նահանգ-
ներու գոյէճներուն եւ համարարաններուն
ստուար մեծամասնութիւնը, պետական
համարարաններէն եւ վարժարաններէն զատ,
հաստատուած են հաւատոյ եւ աղօթքի մար-
դոց ձեռամբ : Ուստի անհաւատութիւնը քիչ
կուտան կը գտնէ անոնց մէջ : Այդ գոյէճնե-
րուն մէջ աւելի մասնաւոր ուշադրութիւն
կ'ընծայուի նկարագրի մշակման, աւելի ու-
շադրութիւն կ'ընծայուի բարոյականի ու-
սուցման, եւ աւելի զրաւան ու կանոնաւոր
կերպով կը ճանչցուին հաւատքի կարեւո-
րութիւնը եւ Աստուածային յայտնութեան
իրաւունքները քան Եւրոպական վարժա-
րաններու մէջ : Հետեւապէս դաստիարակ-
ուած Ամերիկացիներն ընդհանրապէս նաեւ
երկիւղած մարդիկ են, եւ անոնց մէջ ո'չ
Նիւթականութիւն կը ծաղկի, ո'չ Չգիտա-
կանութիւն :

Կը կարծուի թէ Միացեալ Նահանգներու
կրթական բարձրագոյն դրութիւնը միշտ
Եւրոպականէն գերազանց եղած է ուրիշ
նկատումով եւս : Այն է՝ սա նախապատու-
թեամբ, որ բարձրագոյն դպրոցներուն մէջ
իսկ կ'ընծայուի օրէ օր նշանակուած, սոր-
վուած եւ աւանդուած դասերով կրթելու
մեթոտին փոխան դասախօսութեամբ ու-
սուցանելու եւ ուշ ուշ քննութիւն կա-
տարելու դրութեան : Անգղիական համա-
լսարաններու մէջ իսկ թիւն այնպիսիներու,
որոնք գործնականապէս չեն ուսանիր եր-
բեք՝ բառին սեւեւ առումով, այլ իրենց տա-
րիները կը վտանեն չքեղ եւ ընկերային
զուարճութիւններու, խաղերու եւ մրցում-
ներու հետապնդելով, շատ աւելի մեծ է
քան Ամերիկեան համարարաններուն մէջ :

Յաջորդ խմբագրականով, որով կը վերջա-
նայ յօդուածներու այս շարքը, պիտի խօ-
սինք կրթական գաղափարին այն մեծ ու
զարմանալի աճման եւ ընդարձակման վրայ
որ տեղի ունեցաւ ներկայ դարուս վերջին
կիսուն :

ՊԱՐՏԵՂՆ ԵԿԵՒ
(Ա. Բ. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ.)

Ոչ թէ վարդերուն եւ շուշաններուն մէ-
ջերը, այլ այն խոնարհագոյն հողերուն մէջ,
ուր կ'աճին բանջարեղէններուն սոխերը,
սերմերը եւ տերեւները, կը գտնուին այն
տարրերը որ աւելի պիտանի, աւելի առող-
ջարար եւ աւելի հովուերգական յատկու-
թիւն կ'ընծայեն մեր գեղջուկ կերակուրնե-
րուն : Թող չկարծուի թէ՛ հրապոյրէ կամ
վիպական հանդամանքէ գուրկ են այս դա-
ւարիքները : Անոնք Յունաց եւ Հռոմայեցոց
պարտէզներուն եւ արեւելեան երկիրնե-
րուն վիպասանութեանց դասական համ-
ունին :

Սոխը հիմա աղքատին կերակուրն է,
բայց ժամանակաւ այն չաստուածն էր որով
Եգիպտացիք կ'երդնուէին, եւ որուն Իսրայել-
ացիք կը ցանկային մինչեւ անգամ այն ատեն
երբ երկինքէն իջնող մանանայով կը կերակ-
ուէին : Յոյնք եւ Հռոմայեցիք բարձր յար-

գանք կ'ընծայէին անոր : Թէպէտ խստորը,
որ Սպանիացոց այնքան սիրելի էր, զգուցիկ
էր Աթենացոց եւ անկէ ուսող մը չէր
կրնար Սիպիլի տաճարը մանել : Պրասը հա-
ւանօրէն Անգղիոյ բնիկ բոյս է, վասն զի
ուղղակի հին Բրիտաններէն սերող ժողո-
վբազին, Ուէլլսցոց, ազգային նշանն էր
խստորը :

Ազատքեղը (Fuchsia), որ սոխին հոտը
կը ջնջէ, աննշան պատմութիւնն չունի :
Յունոն չաստուածին սիրամարգներուն ու-
տեսոն էր : Հռոմերու պատերազմիկները
դանիկա իրենց ձիերուն կը կերցնէին : Հեր-
քլիւէս անով պսակուեցաւ, եւ ազատքեղէ
ծաղկէփունջը կամ պսակը Նեմեսն եւ Իսթ-
մեան խաղերուն մրցանակներէն մին էր :
Ազատքեղը Անգղիա բերուեցաւ 1548ին :

Եթէ կաղամբը տակաւին կը պահէ այն
ցանկալի յատկութիւնները զորոնք Յոյնք
եւ Հռոմայեցիք կ'ընծայէին անոր, պէտք է
պատուենք զայն : Վասն զի Հիպոկրատէս
եւ Պիլթագորաս անոր կ'ընծայեն զարմա-
նալի բուժիչ եւ սննդարար հանգամանքներ :
Եւ կատոն կը հաւատէ թէ անոր կարմիր
տեսակը դրական դարման է արեւցոյթեան,
եւ կը յարէ թէ «Հռոմայեցիք կաղամբ միայն
գործածելով վեց հարիւր տարի անցուցին
առանց բժիշկներու :» Զարմանք չէ ուրեմն,
որ արդի բժիշկները անոր դէմ կը խօսին :

Իսկ գալով հազարին (Fennel), հաճոյք մը
կայ անոր գանգուր եւ զով տերեւները
կտրելուն մէջ : Երբայցիք իրենց Զատկա-
կան գառին հետ կ'ուտէին զայն : Հազարը
Շուշան մայրաքաղաքին պալատներուն մէջ
խնճոյքներուն մէկ մասը կը կազմէր, եւ
նախնիք իրենց բոլոր հանճարը եւ խնամքը
կը սպասէին այս սիրելի բոյսին վրայ : Յոյ-
ները կը մատուցանէին զայն կոչուեցի սե-
ղանին վերջը : Հռոմայեցիք զանիկա հաւ-
կիթի հետ կ'ուտէին իբրեւ առաջին աստի-
ճանի համադամ : Անգղիա բերուեցաւ Եղի-
սաբեթի իշխանութեան ժամանակը :

Ստեպլինը (Salsaparilla) նոյնչափ յարգ եւ
հնուութիւն ունի : Թալմուտը երկարօրէն
կը խօսի Հրէաստանի ստեպլինին խոշորու-
թեան եւ արդնութեան վրայ : Իսկ Յոյնք
այնպէս բարձր յարգ կ'ընծայէին ստեպլի-
նին, որ սակեղէն ստեպլիններ կը նուիրէին
Ապոլոնի անոր տաճարին մէջ ի Դեղիքիս :
Յոյները կը խաչէին զանիկա, եւ Գաղղիոյ
այսօրուան գեղացիները մօխիբի տակ կը խո-
րովեն : Անգղիա բերուեցաւ 1545ին. եւ
Պիլինոսի զանիկա աղի ջրով ջրելու պատ-
ուէրը տակաւին ի գործ կը դրուի Յունաս-
տանի մէջ տեղ տեղ եւ յայտնի յաջողու-
թեամբ : Ծակընդեղը (Fenugreek) եւ շողգամը
(Rhubarb) երկուքն ալ քաջածանօթ էին, վասն
զի Յոյնք արծաթ ձակնդեղներ կը մատուցա-
նէին Ապոլոնի : Եւ կուրիոսի պատմու-
թիւնը թէ իր շողգամէ սակաւապէտ կերա-
կուրը կ'եփէր Սամիացոց գեսպաններն
ընդունած ժամանակը, կը ցուցնէ թէ այդ
բոյսը Հռոմայեցոց մէջ սակաւապէտ կ'եփէր
նշանակ էր : Մեղի պէս անոնք ալ կը խա-
չէին, բայց կը գործածէին մեղրով, քացա-
խով, արգանակով եւ քիչ մը ձէթով, ասոնք
իրեւ համեմունք աւելցնելով անոր վրայ :
Շողգամը Անգղիոյ բնիկ բոյս է. բայց ստեպ-
լինը Եղիսաբեթի ժամանակը ներմուծուե-
ցաւ, եւ այն ատեն տիկիները իրենց գլուխ-
ները կը զարգարէին անոր գեղեցիկ եւ
փետրանման տերեւներով :

Զովարար, ջրոտ վարուսքը այնպէս առատ
էր Եգիպտոսի մէջ, որ մինչեւ անգամ գե-

քրիստոսը առատորէն կ'ուտէին դայն, եւ ուստի զարմանալի չէ որ Հրեաներն անապատին մէջ ցանկացան անոր ինչպէս պրասներու եւ սոխերու: Կարելի չէ գիտնալ թէ Հրեաները զանիկա գտան Աւետեաց Երկրին մէջ թէ իրենք տարին հոն: Բայց Հրէաստան յետոյ համբաւաւոր եղաւ իր վարունգի պարտեզներուն համար: Վարունգը Անգղիա չմտաւ մինչեւ ժէ. դարը, այսու ամենայնիւ ամենէն սիրելի բուսականներէն մին է հոն: Ամերիկայի մէջ այնքան առատ է որ ամէն աղքատի սեղանին վրայ կը գտնուի:

Ոսպը, բակլան եւ լուբիան ինչպէս իբրեւ ուտեստ նոյնպէս իբրեւ նուերական ընդեղէն կը ճանչցուին: Եսաւ ոսպէ ապուրի փոխարէն ծախեց իր անդրանկութեան իբրաւունքը: Դանիել եւ անոր ընկերները իրենց համար ընդեղէններ ուտել առաջարկեցին Նաբուքոդոնոսորի պալատին մէջ: Բակլան, լուբիան եւ սիսեռը նուերական յիշատակներ կ'արթնցնեն: Պիւթագորաս արգելեց զանոնք ուտելը: Եզրիպտացիք անոնց վրայ նայելը տեսակ մը ոճիր կը համարէին, եւ Ֆլամին Տիպիս կոչուած ժողովրդին թոյլ չէր տրուեր յիշել անգամ զանոնք: Աթենքի մէջ դատական խնդիրներու հետ կապակցութիւն ունէին անոնք: Վասն զի ժողովրդին քուէները ժողովուրդ կը գործածուէին դատաւորներու ընտրութեան ժամանակ: Այս աւանդական աղբեցութեան հետքերը տակաւին կը նշմարուին: Սոյն ընդեղէնները Անգղիա մտան 1509ին, Կատոն Երէց ծանօթացուց ծնեբեկը (հոշ քոմսալ), այն փափուկ պտուղը: Հռոմայեցիք այնպէս խնամով կը մշակէին զանիկա, որ Պիլիոս կ'ըսէ թէ անոր երեք դուխը լիար մը (իր 140 տրամ) կու գար: Եղիստարթի իշխանութեան միջոցին մուծուեցաւ Անգղիա:

ԱՆՁԻՒ ՀՈԳ ՏԱՐ

Փրոֆ. Սփարքըր կ'ըսէ. Աղէկ մտածէ տանդ — այսինքն մարմնիդ — վրայ որուն մէջ կը բնակիս: Հաստատ միտքդ դիր զանիկա չաւրել: Մի գետեր զանիկա մշտադ բան մը: Մի հագնիր զանիկա ծամածոզ կամ ցաւցնող բան մը: Մի բեռնաւորներ զանիկա ուտեստներով, բմպելիներով կամ գործերով: Կանոնաւոր եւ շատկէկ քնացիր: Մարմինդ հագուեցուր տաքուկ հանդերձներով: Յուրա մի առներ. ցուրտին դէմ մեծ զգուշութիւն ըրէ: Եթէ ցրտառութեան առաջին նշանները զգաս, դիւցազնաբար ըրէ ամէն զարման: Ինքզինքդ լաւ մը տաքցուր մարմնամարզով: Այս է միայն այն մարմինը զոր ունիս այս աշխարհին մէջ: Խորապէս եւ ժրջանութեամբ ուսումնասիրէ զայն կառավարող օրէնքները:

ՕԴԻ ՈՎ ԿԻԱՆՈՍԸ ՈՐՈՒՆ ՄԷՋ ԿԸ ԲՆԱԿԻՆՔ (ՄԷՊ ԳԵՒԷ)

Ենթադրենք թէ էակ մը, որուն աչքերն այնպէս շինուած են որ կրնայ տեսնել կաղերն ինչպէս մենք կը տեսնենք հեղանիւթները, հեռաւոր տեղէ մը վար երկրիս վրայ նայէր: Պիտի տեսնէր երկիրս շրջապատող օդի ովկիանոսը, որուն մէջ թռչունները կը լողան, որուն յատակը մարդիկ կը պտըտին, ճիշդ ինչպէս որ մենք կը տեսնենք ձուկերուն սահլը գետին յատակին մօտ: Պիտի չկրնար տեսնել թռչուններուն մակերեսին մօտ գալը, վասն զի ամենէն բարձր թռչունը դեռնէն հինգ մղոնէն ա-

ւելի բարձր չսաւառնիր, մինչ մթնոլորտը 100 մղոն բարձրութիւն ունի: Եթէ կարող ըլլանք երեւակայել օդի ովկիանոսին մէջ ձկնորսութիւն ընող էակ մը, մեզմէ մէկը մթնոլորտին սահմաններէն վեր քաշելու կարող, այդ էակը պիտի տեսնէր որ կը հեւանք եւ կը մեռնինք ճիշդ ինչպէս ձուկերը կ'ընեն երբ ջուրէն դուրս կը քաշուին:

Պիտի տեսնէր նաեւ շատ հետաքրքրաշարժ բաներ որ տեղի կ'ունենան մեր օդի ովկիանոսին մէջ: Օրինակի համար, օդի մեծ գետեր եւ հոսանքներ զորոնք հով կը կոչենք, եւ որոնք անոր այնպէս պիտի երեւնային ինչպէս Ովկիանոսի հոսանքները կ'երեւնան մեզի, մինչ ցածր երկրիս մօտ պիտի տեսնէր թանձր մշուշներ — մեր ամպերը: Պիտի տեսնէր որ անոնցմէ երկրիս վրայ կ'իջնեն անձրեւ, կարկուտ եւ ձիւն, եւ ժամանակ ժամանակ պայծառ փայլատակուէր: Միտի գօտին ալ, զոր մեր վերի կողմը կը տեսնենք, պիտի տեսնէր վարը, երկրիս մօտ:

Ինչ է օդը: Առաջին անգամ պարզ կազ մը կը կարծուէր: Բայց հիմա գիտենք թէ բաղադրութիւն է երկու կազերու, Ռիտաձի եւ Բորակաձի: Թթուածինն է որ կը գործածուի երբ բան մը կ'այրի, եւ բորակածինը խառնուած է թթուածինն հետ ասիկա ակարացնելու համար, վասն զի եթէ թթուածինը միակ դոնուէր, չափազանց զօրաւոր կ'ըլլար:

Ուեւէ մէկը կրնայ սա պարզ փորձը կատարել: Առ մեծ պնակ մը եւ զանիկա կէս մը լեցուր ջրով: Յետոյ անոր մէջ դիր փոքր խորունկ պնակ մը որուն մէջ պղտիկ կտոր մը փոսփոր դրուած ըլլայ: Փոսփորը բարձրացուր լուցկիով մը եւ իսկոյն անոր վրայ գլխիվայր ապակեայ բաժակ մը գնելով աղէկ մը ծածկէ զայն: Բաժակին մէջ ձերմակ գոլորշիներ կը տեսնուին, որոնք փոսփորեան թթու են, այսինքն փոսփորէ եւ թթուածին կազէ բաղկացեալ նիւթ մը: Երկու փոսփորեան թթուներ կը հալի ջուրին մէջ եւ միայն ջրածինը կը մնայ, թթուածինն չորեքպատիկը:

Օդին մէջի թթուածինն է որ կը սպառի մեր շնչած ժամանակը: Եթէ բաժակին ներքեւը մուկ մը գնէիք փոխանակ փոսփորի կտորին, շուտով անոր շնչառութեամբ պիտի հատնէր բոլոր թթուածինը, եւ ամբարձիւն թթու պիտի արտադրուէր, եւ մուկը պիտի մեռնէր:

Ուստի կրնաք տեսնել թէ ինչ յիմարութիւն է բնաւ օդ չառնող սենեակներու մէջ բնակիլ, եւ գլուխիդ ծածկել վերմակներուն ներքեւ երբ կը քնանաք: Այսպէս ընելով թուեաւոր օդ կը շնչէք որ ձեզ կը հիւանդացնէ:

Եթէ թթուածինը բորակածինն հետ չխառնուէր, շատ արագ պիտի ըլլար մեր շնչառութիւնը, եւ շուտով տեսնէ պիտի բռնուէինք, կրակը կատաղութեամբ պիտի վառէր եւ ամէն բան պիտի կորսուէր: Հրդեհի ժամանակ եթէ կտորը ըլլաք ծածկել կրակը եւ չթողուլ որ օդ մտնէ անոր մէջ, շուտով պիտի մարի:

Միայն թթուածինը եւ բորակածինը չեն որ կը գտնուին օդին մէջ: Մարդիկ եւ անասունները շնչառութեան ատեն քիչ մը ամբարձիւն թթու կազ կ'արձակեն: Ուստի եթէ աշխարհիս մէջ բուսականներ չկենային, եւ բոլոր կենսաւորները կենդանիներն ըլլային, օդը պիտի թուեաւորուէր այս կազով եւ մարդիկ եւ անասունները պիտի

մեռնէին: Բայց բուսականները ամբարձիւն թթուով կ'ապրին, բնածուխը կը սպառեն եւ նորէն օդին մէջ կ'արձակեն թթուածինը:

Օդին մէջ կայ նաեւ ամոնիակ. բաց աստի կը գտնուի միշտ ջուր, այսինքն քիչ մը խոնաւութիւն:

Օդը, գիտենք որ թեթեւ է: Բայց ինչո՞ւ ուրեմն չփախչիր երկրիս երեսէն: Կը փորձէ փախչիլ, սակայն ծանրութեան զօրութիւնը զանիկա երկրիս մօտ կը պահէ. եւ գիտենք որ օդը շատ մը աւելի խիտ է երկրիս մօտիկը քան երկրիս մակերեսէն հինգ մղոն վերը: Նաեւ մթնոլորտին ծանրութիւնը կը կուխ օդին ցած խաւերուն վրայ: Եւ մինչ մեզի կը թուի թէ օդը շատ թեթեւ է, դժուարաւ կը հաւատանք թէ բաւական ծանր է, երկրիս մակերեսին ամէն մէկ քառ. մասնաչափին վրայ 15 լիար (գրեթէ 5½ քաշ) ճնշում կայ: Ապակեայ բաժակ մը մինչեւ բերանը լեցուցէք ջրով, խաւաքարտի կտոր մը առէք, անոր մէկ երեսը թրջեցէք, բաժակին բերանը կոխեցէք զայն ամուր մը եւ բաժակը գլխիվայր դարձուցէք, եւ պիտի տեսնէք որ ջուրին բոլոր ծանրութիւնը չկրնար խաւաքարտը բաժնել բաժակէն: Պատճառն այն է որ օդը խաւաքարտին վրայ աւելի ուժով կը ճնշէ քան ջուրը: Ուրիշ շատ մը պարզ փորձեր ալ կրնան կատարուիլ օդին ծանրութիւնը ապացուցանելու համար:

ՍՊԱՆՆԵԼ ԳԻՐՔԵՐՈՒՆ ՄԷՋԻ ՄԱՆՐԱՃՅԻՆԵՐԸ

Գիտութիւնը կ'առնէ զօրծածուելով աղտոտած հատորը որ մեր նախնեաց շատ սիրելի էր, կը մոռնայ անոր մէջ գտնուած հոգեյոյզ պարագաները եւ անոնց տեղը կը գտնէ մանրաձիներ: Եւ շատեր պիտի խոստովանին թէ այդ զգացումը քիչ մը սուղի կը նստի եթէ այդ գիրքը իր հետ կը կրէ ժանտատենդ կամ կեղծմաշկ:

Այսպիսի է Նիւ Եորքի Հանրային Գրատան տեսչութեան գաղափարը: Երբ ջրամբարը վերցուի Պրայէնթ Փարքէն եւ անոր տեղը շքեղ գրատուն մը կառուցուի հոն, գիրքերու ձրի փոխատուութեան տեղ մը, ինչպէս ընթերցարանի սրահներ եւ մատենադարան, Նիւ Եորքի իւրաքանչիւր ընտիր նկարագրի տէր բնակիչ պիտի կարենայ գիրքեր փոխ առնել առանց վարձ վճարելու: Իսկ Հանրային Գրատան Տեսչութիւնը ժամանակէ մը հետէ կը մտածէ թէ ինչպէս կարելի է վերցնել վտանգները որ անհրաժեշտապէս յառաջ կու գան գիրքերուն՝ քաղաքին ամէն մէկ կողմը շրջաբերելէն: Խափանարար միջոցներն հարկաւ անգործադրելի են: Նոյնքան անկարելի է գիտնալ թէ փոխ տրուած հատոր մը պիտի գործածուի՝ ախտերէ գերծ անձերէ, որքան գուշակել թէ ո՛ւր այդպիսի ախտեր պիտի ծագին: Ձեռք առնուելու միջոցները զգուշական կամ հրահանգիչ պիտի ըլլան, եւ խնդիրն ինքնին պիտի լուծուի գոհացուցիչ հակամեխակայն մը գտնելով:

Ժամանակէ մը հետէ Տր. Ճոն Ս. Պիլիկուս, գրատան վերատեսուչը, փորձեր կը կատարէ կատարեալ հակամեխակայն մը գտնելու: Անցեալ տարի Մր. Հորթըն, Տր. Պիլիկուսի տեսչութեան ներքեւ կարգ մը փորձեր ըրաւ այս վերջնոյն բնալուծարանին մէջ ի Յիլատէլֆիա: Մենաշնորհի պաշտօնատան վերաբերեալ բաւական թուով հին տեղեկագրութիւններ մանրաձիներով լեցուն էին, եւ քիչ ժամանակէն այդ գիրքերը լցուցան հարսանիթի, կարմրախառի, ծաղկախառի եւ ուրիշ ախտերու պատկերով:

Ասոր վրայ փորձեր կատարուեցան մանրաձկններն սպանող զանազան նիւթերով. եւ Տր. Պիլինկս կ'ըսէ թէ այդ փորձերուն արդիւնքն եղաւ կատարեալ հակառակակամ նոր կազի մը գիւտը : Իրեքին հատորը կը դրուի ապակի ամանի մը կամ մետաղեայ արկղի մը մէջ, ուր ջուրի մէջ դրալ մը ֆորմալինով լուծուած մը պատրաստ կը կենայ : Գիրքը մէկ կամ երկու ժամ կը թողուի հոն : Այն ատեն լուծուածէն ելող շոգին թափանցած կ'ըլլայ գիրքին ամէն մէկ մասնակին մէջ եւ ողջ մանրաձկն մը անգամ չկրնար գտնուիլ :

Այս գործողութիւնը պիտի կատարուի նիւ Եորքի Հանրային Գրատան գիրքի փոխատուութեան ճիւղին մէջ : Յայնժամ յիշեալ հաստատութեան հետ առնչութիւն ունեցողները կրնան վայելել մտքի հանգարտութիւն, վստահ ըլլալով թէ իրենց փոխառած գիրքերը զերծ են կեղծմաշկի կամ ժանտատենդի սարսափելի սերմերէն եւ երկիւղ չեն ունենար թէ այդ փոխտրուան բոյները իրենց տունները պիտի տանին :

Գրասէրներն ալ ուրախ պիտի ըլլան իմանալով թէ ֆորմալինը պիտի ջնջէ այն վնասակար որդը (Գրոթընի որդ) որ կ'աւրէ կ'ապականէ գիրքերու ընտիր կազմերը : Աւանդական գիրքի որդը հիմա հաղուագիւտ է Ամերիկայի մէջ, բայց անոր տեղը բռնած է հիմա Գրոթընի որդը, որ սաստիկ թշնամի է գիրքերու կաշիներուն :

ԱՐՇԱՒԱԽՈՒՄԲ ԱՐ ԴԵՊ Ի ՓԱԹԱԿՈՆԻՍԱ

Ամերիկայի Փրինսթըն Համալսարանէն շրկուած երկրախոյզ խումբը, որ 1896 Փետրուարին ճամբայ ելաւ, վերադարձաւ Օգոստոսին : Խումբին պետն էր երկրաբանական ճիւղին ուսուցիչներէն Փրոֆ. Ու. Պ. Աքոթ : Արշաւախումբին նպատակն էր ողնայարաւոր կենդանիներու բրածոներ հաւաքել երրորդական խաւերու մէջէն, եւ այժմու թռչուններու եւ կաթնատուներու մորթեր եւ կմախքներ : Տեղերը ուր որոշուեցաւ երթալ, էին կ'ըսէ Սայնս, Կալլանկոսի նաւահանգիստը Հարաւային Փաթակոնիոյ ծովեզերքին վրայ : Այս կէտէն կատարուեցան խուզարկութիւններ Մակիլլան Նեղուցներուն մէջ Սանտի Փոյնթէն սկսեալ մինչեւ Փոթթ Տիլզայր ղէպի հիւսիսակողմը : Այս կողմերէն շատ մը շահեկան բրածոներ ձեռք բերուեցան եւ գրեթէ լիակատար շար մը՝ ողջ թռչուններու, կաթնատուներու եւ բոյսերու : Արշաւախումբը ծովեզերքին վրայ քանի մը ամիսներ անցընելէն հաջող ներսերը գնաց, ուր շատ մը նոր ստանարաններ եւ ջուրի հոսանքներ գտաւ : Որովհետեւ այդ երկիրը երբեք խուզարկուած չէր, ոչ միայն երկրին աշխարհագրութեան վերաբերեալ նոր իրողութիւններ գտնուեցան հոն, այլ նաեւ գիտութեան համար նոր շատ մը բոյսեր եւ կենդանիներ հաւաքուեցան, մանաւանդ երկրաբանական բնորոշութիւններ վերաբերեալ մեծարժէք տեղեկութիւններ : Յարդ անձանօթ հրաբխային բազմաթիւ կոներ եւս գտնուեցան :

Ներսերը ճամբորդելու դժուարութեան պատճառաւ անկարելի էր շատ պաշար տանիլ : Ուստի հարկ եղաւ արշաւողներուն թիւը պակսեցնել, եւ ընտրուեցան միայն Մր. Հէլըր եւ Մր. Փիթըրսըն : Հինգ ամիս բացակայ գտնուեցան խուզարկութեան գործին պարապելու համար : Եւ այդ միջոցին անկարելի էր իրենց լուր կամ նամակ ընդունիլ կամ շրկել, միակ մարդկային էակի անգամ չհանդիպեցան : Տարիէն քիչ մը

աւելի Փաթակոնիոյ մէջ պտրտելէ հաջող անցան Թիէրրա տէլ Ֆուէկօ եւ անոր մերձակայ կղզիները, ուր կղզիներուն երկրաբանութեան եւ հնէաբանութեան վերաբերեալ կարեւոր հաւաքածոներ պատրաստուեցան եւ դիտողութիւններ կատարուեցան :

Խուզարկութեան պարապման միջոցին Արժանթինի կառավարութիւնը շատ առատաձեռն եւ ազնիւ գտնուեցաւ, արշաւախումբին անդամներուն տեղափոխութեան դիւրութիւններ ընծայելով իր մարտանաւերուն միջոցաւ, զանոնք Պուէնոս Այրէսէ կալէկոս անցընելով եւ նորէն ետ բերելով : նաեւ անոնց տրամադրութեան ներքեւ դնելով փոքրիկ նաւ մը՝ կղզիներուն մէջերը հետազոտութիւններ կատարելու համար : Պատրաստուած հաւաքածոն այդ կողմերը պատրաստուածներուն մէջ ամենէն ընտիրն է, վասն զի կը պարունակէ մամուռներու եւ ծաղկող բուսականներու գրեթէ լիակատար շար մը, այժմու թռչուններու 800 մորթեր եւ կմախքներ, նաեւ 8 տակառաչափ բրածոներ, որոնց մէջ կը պարունակուին 1,000 գանկեր եւ գրեթէ նոյնքան կատարեալ կմախքներ :

ԳՈՐԾԻՆ ՇԱՊԻԿ ՓՈԹԵԼԸ

Պայծառ առաւօտ մը, կ'ըսէ բժիշկ Է. Տ. Պինքըրտ, կը պտրտէի պարտէզիս մէջ, եւ տեսայ միջակ մեծութեամբ գորտ մը : Թուեցաւ թէ մասնաւոր կարողութիւն մը ունէր ուզած ատենը իր մորթը թրջելու եւ նորէն չորցնելու արագ արագ : Մորթին թրջուած վիճակին մէջ ունեցած փայլուն երեւոյթը ուշադրութիւնս գրաւեց, եւ կեցայ զիտելու համար թէ ի՞նչ պիտի հետեւէր : Ետևով անյայտ եղաւ բոլոր խոնաւութիւնը : Թուեցաւ թէ կենդանին խոնաւութիւնը ծծելու եւ յետոյ նորէն զուրս տալու կարողութիւնն ունէր :

Մեծ եղաւ զարմանքս երբ գորտը կայծակի արագութեամբ քանի մը շարժումներ ընելով մերկացաւ իր վերնամաշկը : Գորտը զարձաւ եւ մէկ անգամուն կող տուաւ իր հանած մորթը, եւ յետոյ սկսաւ իր ոստիւններն ընել նոր եւ ողորկ կերպարանքով :

Ուրեմն պաղարիւն գորտն ալ, պաղարիւն օձին պէս, կը հանէ իր մորթը, այսինքն շապիկ կը փոխէ, բայց որովհետեւ հող կը տանի հանած մորթը կլլել այսպիսի կայծականման արագութեամբ եւ հիւանալի ճարտարութեամբ, այս կերպարանափոխութեան ապացոյցները չեն մնար ինչպէս կը մնան օձիները, վասն զի օձը իր ետեւը կը թողու մորթը :

ՄԵՆԵԼԻՔ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ինչպէս շատեր գիտեն, ամենէն հին ձեռագիրներէն, մասնաւորապէս Սուրբ Գրոց ձեռագիրներէն, ոմանք Հապէշաստանէ եկած են : Թէ տակաւին ո՛րչափ ձոխ հնութիւններ պիտի ընդունուին այդ երկրէն, կրնայ միայն ենթադրուիլ : Մատրիտ հրատարակուած Լ. Ն. Բ. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ. լրագրէն կը հասկնանք հաճոյքով թէ վեշտասաներորդ դարուն Հապէշը իրենց բոլոր եթէօլպական ձեռագիրները դրին Տէպրա Սինայի մէջ որ Զոնէյ Լճին կղզիներէն մէկն է, եւ հոս կը մնան բնակչաց խնամոտ պահպանութեան ներքեւ, որոնք իրեւ պաշտպան չաստուածներ կը յարգեն այդ գիրքերը : Ետև չընել Մենելիք արշաւախումբ մը զրկեց այդ սուրբ կղզիները առնելու համար, եւ իր մայրաքաղաքին, Ատտիս Ապպայի, մէջ այդ գտնուած ձեռագիրներուն յատուկ գրատուն

մը շինած է : Հին ժամանակները եթէօլպի գիտութեանց կեդրոն մըն էր, եւ անտարակոյս այս ձեռագիրներէն ոմանք շատ մեծ արժէք ունին :

ՓՐՈՑ. ՄԵԼԻՔՈՆ ԱՍՏՈՒԱՄԱՏՈՒՐԵԱՆ

Փրոֆ. Մելքոն Աստուածատուրեան, որ տարիներէ ի վեր կը դասախօսէր Եփրատ Գոլէճի մէջ եւ իմացական ու բարոյական մեծ ոյժ մը էր այդ հաստատութեան եւ շրջակայից համար, ցաւօք կ'իմանանք թէ Հոկտ. 22ին ընտանեօք թողեր է իր աշխատավայրը եւ օտար երկիր ուղեւորեր : Նոյն օր գոլէճի սրահին մէջ, որ վայելչապէս դարդարուեք է կանաչներով, հրաժեշտի դեղեցիկ հանդէս մը կազմակերպուեք է ի պատիւ Փրոֆէսորին : Եւ այդ առթիւ բարձր կարգերու ուսանողներէն ոմանք ի դիմաց իրենց դասակիցներուն եւ Փրոֆ. Թէնէքէճեան ի դիմաց իր պաշտօնակիցներուն, երախտագիտական եւ դնահատական ուղեբձներ տրտասաններ եւ ողջերթ մաղթեր են Փրոֆէսորին : Կէսօրէն հաջող լոր բարեկամներ լիւթացեր են յուզարկ երթալ : Ուրախ պիտի ըլլանք եթէ, հրատարակութեան համար, այդ դեղեցիկ հանդէսին եւ Փրոֆ. Մելքոնի բազմօգուտ ծառայութիւններուն ամփոփ մէկ նկարագիրն ընդունինք Եփրատ Գոլէճի մէկ ուսուցիչէն :

ՄԱՆԱԳՈՅԺ

«Երանելի են անոնք որ Դառնուկին հարսանեացը ընթրիքին կանչուած են :»

Հոկտ. 16/28-ը օրը, Տէրն իրեն կանչեց քաղաքի Հայ Աւետարանականներէն Տիկին Մարիցա Աբրահամ Եագուպեանը, որ երկար տարիներէ ի վեր անողոք հիւանդութեան մը ճիրաններու ներքեւ կը տառապէր : Հանգուցեալը իր ծանր վշտերու ներքեւ ոչ երբեք իր բերնէն դժգոհութեան բառ մը հանեց : Գիտէր թէ կը մտենար մահուան բաժակը, բայց չկորսնցուց իր քրիստոնէական հանգարտութիւնը :

Հանգուցելոյն վերջին յարգանք մը տալու համար քաղաքի Լուսաւորչական եղբայրներէ ընտիր բազմութիւն մը փութաց մինչեւ Ամերիկեան գերեզմանատունը, ուր փոխադրուած էր հանգուցելոյն մարմինը Եագուպեանց ազարակէն :

Կը մաղթենք որ Տէրը մխիթարէ սգաւոր ամուսինը, մայրը եւ Եագուպեանց տան բազմաթիւ անդամները, ազգականները ու բարեկամները :

Գահիրէ
Նոյ. 4, 1897

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԹԵՔԵԱՆ

Ա Զ Դ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻ

1898 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԲՐԻՍՏՈՒԻ

Ընտիր թուղթով, մաքուր տպագրութեամբ եւ հաստատուն կազմով, կը պարունակէ, բաց ի տոմարական գիտելիքներէ, Հայոց եւ Հոլանդական Հայոց առօրեայ յիշատակութիւններն ամբողջ, Յունաց եւ Լատինաց զխաւոր տօները եւ Տաճկաց ու Հրէից նշանաւոր օրերն ու պայրամները : Ունի նաեւ ընդարձակ յաւելուած մը այլեւայլ ծանօթութիւններու : Գին 60 փարա : Հասոյթը յատկացեալ է Պրուսայի Արեւելեան Որբանոցին, ուր պատսպարուողներու թիւը հասած է 160ի : Կեդրոնատեղին է Պ. Պալենց գրատունը, Թիւ 20, Չաղմազճըլար : Մեծաքանակ զնոյններու գոհացուցիչ գեղէ :

Երիտասարդաց կիրակնօրեայ աղօթքի ժողովը կը սկսի ժամը 9ին (Ը. Թ.) Պայպը Հաուսի մատրան մէջ : Խորհրդածութեան նիւթն է. «Որուն որ շատ արուեստաւ, շատ պիտի ուղուի անկէ» Դուկ. ԺԻ. 48 :

ՀԱՆՂԷՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Նոյ. 6 ըստ Յուն. և Նոյ. 18 ըստ Լատ. 1897

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիա. Անցեալ չորեքշաբթի Լոնտոնի նոր քաղաքացիաբար իր պաշտօնն սկսաւ սովորական հանդիսիւ: Այդ առթիւ արուած հացկերոյթին մէջ որ տեղի ունեցաւ քաղաքացիական պաշտօնատան մէջ Լորա Սալզպլըրի խօսեցաւ ճառ մը, որ ընդունուած սովորութեան համաձայն քիչ մը տեղեկութիւն հաղորդեց Մեծ Բրիտանիոյ արտաքին յարաբերութիւններուն վրայ: Ափրիկէի եւ այլեւայլ կառավարութիւններու Ափրիկեան շահերուն վրայ խօսելով ըսաւ թէ Ափրիկէ ստեղծուած է արաքին գործերու պաշտօնատուններու պատուհասն ըլլալու համար: Անգլիա իր Ափրիկեան գործողութիւններուն մէջ չբաղձար երկրակալութեան, այլ մարդկային ազգին վաճառականութեան եւ քաղաքակրթութեան ընդարձակման, եւ կը փափաքէ բարի դրացիի վայել կերպով վարուիլ, յարգելով ուրիշներու զգացումները եւ իրաւունքները: Անցնելով Յունական պատերազմին եւ արեւելեան գործերու խնդրոյն ընդհանրապէս, կարգ մը շահեկան դիտողութիւններ ըրաւ Եւրոպական Ներդաշնակութեան վրայ: Ըսաւ թէ Եւրոպական Ներդաշնակութիւնը կը գործէ միայն երբ միաձայն է: Բոլոր կարելին ըրաւ թոյլ չտալու համար որ Յունաստան ինքնասպանութիւն գործէ պատերազմի դիմելով: Սակայն կար բան մը գոր չէր կարող ընել: Մարդ մը ամէն կարելի միջոցներով բաց ի մէկէ, կրնայ իր բարեկամն արգելել անձնասպան ըլլալէ: Չկրնար սակայն սպաննել զայն որպէս զի չթողու որ նա ինքզինք սպաննէ: Եւրոպական Ներդաշնակութիւնը պատերազմ չըրաւ Յունաստանի հետ որպէս զի զգուշացնէր զայն պատերազմի աղէտներէն: Բայց պատերազմին տարածուելուն եւ ընդհանրանալուն առջեւն առաւ: Այս է մեծ գործը զոր Եւրոպական Ներդաշնակութիւնը կատարեց անցեալ տարի: Այս Լորա Սալզպլըրի խօսեցաւ անոնց վրայ որոնք Եւրոպայի դանդաղութիւնը կը քննադատեն: Եւ ըսաւ թէ հարկ է յիշել թէ Եւրոպական Ներդաշնակութիւնը շատ բարեմասնութիւններ ունի, բայց արագութիւնն անոնցմէ մին չէ: Մեծ ոյժ ունի, բայց ոչ արագութիւն: Եթէ պիտի լուծուին այն խնդիրները որոնք լուծուելու են ունէ կերպով, Ներդաշնակութեան գործը դատուելու է լրջութեամբ: Քանզի ոչ մէկ տէրութիւն կրնար աւելի աղէկն ընել: Ներդաշնակութիւնը միակ զօրութիւնն է որ կարող է Եւրոպան փրկել համայնաւոր ընդհանուր պատերազմէ մը: Բայց Եւրոպական Դաշնակցութեան մը սկզբնաւորութիւնն է դեռ: Խաղաղութեան միակ յոյսը սա է որ այս Ներդաշնակութիւնը կրնայ տակաւ տակաւ միացնել Եւրոպական բոլոր տէրութիւնները մինչեւ որ վերջապէս կազմեն Միջազգային Դաշնակցութիւն մը, որ շնորհիւ իր մեծ ոյժին աշխարհի տայ վերջապէս անընդհատ խաղաղութեան եւ աւելարկական բարգաւաճման երկարատեւ շրջան մը: — Հնդկական գործերու մէջ կարեւոր բան մը չպատահեցաւ շաբթուանս մէջ: Թիբայի հովտին Անգլ. զօրքերը շարունակեցին գրաւել շրջակայ դաւառին մէջ գտնուած պաշարները, եւ ապստամբները շարունակեցին

յարձակիլ անջատ ջոկատներու վրայ եւ գիշերայն կրակ ընել բանակետդին վրայ եւ ամէն անգամ քանի մը սպայ կամ զինուոր սպաննել: Անցեալ երկուշաբթի Քափուրթալայի Բաճային կողմէ արուած զօրքերէն սպայի մը եւ երեսունեւհինգ զինուորի ճամբան կտրուեցաւ անտառային հրդեհով եւ չկրցան բանակետդ վերադառնալ: Ապստամբներ անոնց վրայ յարձակեցան եւ սպաննեցին: Տեղացիներու պզտիկ խումբ մը եւս յաջողեցաւ Անգլ. բանակին ետեւն անցնել հեռագրական թելերը կտրելու եւ զրկուած պաշարի կարաւանին վրայ յարձակելու համար: Քարափայի մօտ ՅԱ ուղտ բռնեցին: Բայց Անգլ. սպայ մը, երկու զինուորով պատահմամբ այդ կողմը գտնուելով, վանեց ասպատակները եւ ետ առաւ ուղտերը: Միեւնոյն ժամանակ Օրաքղայ ցեղերուն հետ որոնք հաշտութիւն խնդրած են՝ բանակցութեան ձեռնարկուած է:

Աւստրալիա. Երեսփ. Ժողովը շատ փոքր մեծամասնութեամբ մը մերժեց Ընդդիմադիր կուսակցութեան առաջարկը, որ էր դատ բանալ Պատէնի կոմսին դէմ այն հրամանագրերուն պատճառաւ, որով կը ներուի Պոնտիփական լեզուն իրբեւ պաշտօնական լեզու գործածել Գերմանականին նման: — Մ. Ապրահամովիչ Ժողովին ատենապետ ընտրուեցաւ եւ իր բացման ճառին մէջ ցոյց տուաւ թէ հարկ է որ երեսփոխաններն աւելի հանդարտ եւ զգուշաւոր ընթացքի մը հետեւին, քանի որ երկրին բարօրութիւնն աւելի կարեւոր է քան Երեսփ. Ժողովի այս կամ այն կուսակցութեան յաջողութիւնը: Իր ճառը ջերմապէս ծափահարուեցաւ մեծամասնութեան կողմէ, բայց Գերման ընդդիմադիրները խմբով մեկնեցան Ժողովարանէն երբ նա խօսիլ սկսաւ: Հունգարիոյ հետ համաձայնութիւնն ի զուրիս հանելու գործը դեռ յառաջդիմութիւն մը չըրաւ, վասն զի ընդդիմադիրներն ամէն միջոց կը գործածեն անոր քուէարկումն արգելելու համար: Զրոյցներ չըլցեցան թէ Պատէնի կոմսը պիտի հրաժարի: Բայց այդ զրոյցներն ազդուապէս հերքուեցան կէս-պաշտօնական Ֆրեյդեպլի միջոցաւ:

Ֆրանսա. Պատերազմական նախարարութեան պաշտօնատան յատուկ գաղտնիքներ ծախած ըլլալու յանցանքով դատապարտուած Ֆրանսացի նախկին հարիւրապետ Տրէյֆիւսի բարեկամներէն ումանք կ'աշխատին նոր դատավարութեան մը հրաման հանել տալ, առարկելով թէ դատական սխալ մը գործուած է: Ֆրանսական նախարարութիւնը սակայն յայտարարեց թէ նոր ապացոյց մը յառաջ բերուած չէ, ուստի եւ կառավարութիւնը կրնայ միայն պնդել թէ մարդն օրինաւորապէս դատապարտուած է, եւ ինք պարտական է մերժել նոր դատավարութեան մը առաջարկը: — Դատապարտեալ հարիւրապետին մէկ ազգականը իր կնոջ եւ երեք զուակներուն հետ վերջերս անձնասպան եղաւ Փարիզի մէջ: Այս ոճրին շարժառիթը դեռ անձանօթ է: — Դաղթային նախարար Մ. Լըպոն որ Ափրիկէի մէջ պոյոյս մը ըրաւ մինչեւ Նիկերի գաւառը՝ Ֆրանսա վերադարձաւ: — Ֆրանսական այն զօրքեր որ Նիկերի մօտերը Անգլ. հող գրաւած էին՝ ետ քաշուեցան: Հիմա յայտնի է թէ քիչ մնացեր է որ այդ զօրաց արշաւանքը Ֆրանսայի եւ Անգլիոյ միջեւ պատերազմ յառաջ բերէր:

Գերմանիա. Ռուսական կառավարութիւնն իր բարեկամական զգացումն յայտնեց Պա-

տենի մեծ-դքսին, որոշելով դիւանագիտական ներկայացուցիչ մը հաստատել Պատենի Քարլսրուէ մայրաքաղաքին մէջ: — Պիզմարը իշխանին առողջութիւնը ծանրապէս խանգարուած է: — Գերման Ընկերավարականները ծրագրեր կը պատրաստեն Ռայխսթակին մէջ նոր աթոռներ կորզելու համար երեսփոխանական ընտրութիւններու առթիւ, եւ վստահ են թէ պիտի յաջողին: — Գերման տէրութիւններէն երեքը բանակի վերաբերեալ նոր օրէնքներուն դէմ քուէարկեցին: Նաւատորմն ընդարձակելու համար կառավարութեան նոր առաջարկներն հաւանօրէն շատ ընդդիմութեան պիտի հանդիպին երբ Ռայխսթակը դումարի ամսոյս 30ին: — Արտաքին գործերու նախարար Մ. Պիլցո շաբթի Հոռմի մէջ Պապին ներկայացաւ: Կը կարծուի թէ իր այցելութիւնը վերաբերութիւն ունի այն դժգոհութեան, որ Գերմանիոյ քանի մը կողմերն յառաջ եկաւ Պապին վերջին շրջաբերականով, որ ուղղուած էր Գերման կաթոլիկ եկեղեցականներուն:

Իտալիա. Այս շաբթու Իտալիոյ բովանդակ նաւատորմը պատերազմական վիճակի մէջ կը գրուի փորձելու համար կիրառութիւնն այն կանոններուն, որ հաստատուեցան նաւատորմը շարժման մէջ դնելու համար պատերազմի ժամանակ: — Հոռմէ կը ծանուցուի թէ Սերպիա պիտի ընտրէ եւ Պապին զրկէ դեսպան մը իրբեւ ներկայացուցիչ Ալեքսանտր թագաւորին:

Սպանիա. Քուպայի նախորդ կառավարիչ Զօր. Ուէյլըր հինգշաբթի ձխարարութար հասաւ: Սպանիական հող մտնելու պահուն խանդավառ ընդունելութիւն գտաւ Ժողովըրդէն: Գաւառին կառավարիչը եւ ուրիշ պաշտօնատարներ պաշտօնանկ եղան այդ պատճառաւ:

Յունաստան. Հինգշաբթի Յունական խորհրդարանն ի նիստ գումարեցաւ եւ Երեսփ. Ժողովին նախագահ ընտրուեցաւ Տէլեանիի կուսակցութեան Մ. Ռոմա: Կը հեռագրուի թէ նախարարական փոփոխութեան երկու չկայ: — Այն քննութիւնը, որ բացուեցաւ գտնելու համար թէ որ՞ը վրայ կը ծանրանայ Յունական նաւատորմին առանց պայթուցիկ նիւթի ծովառումը զրկելու պատասխանատուութիւնը, տակաւին բաւական ուշադրութիւն կը գրաւէ Աթենքի մէջ: Բայց ծովառումըրու հոգ տանող բոլոր պաշտօնականներ կ'ընդունեն թէ իրենք պատասխանատու են այդ զանցառութեան համար: — Կառավարութիւնն իմացած է թէ Թեսալեան գաղթականներն հիմա կրնան իրենց տեղերը վերադառնալ Վոյոյի ճամբով: — Անգլ. նպաստամատոյց յանձնաժողովը որու կը նախագահէ Ուէյսթմինսթըրի դուքսը՝ ձեռնարկած է նպաստ զրկել Թեսալեան գաղթականներուն: — Յունական երեւմտեքի միջազգային հսկողութեան յանձնաժողովը կը յայտարարէ ծանուցանել իր խորհուրդները եւ որոշումները: Յոյները կը գանդապին թէ յանձնախումբը կը պահանջէ հսկողութիւն մը աւելի արմատական քան զոր որոշուած է այն համաձայնութեամբ որու ներքեւ հաստատուեցաւ այն: — Կըսուի թէ Սըր էտկար Վինսընթ Յոյն կառավարութեան նոր առաջարկներ ըրած է այն փոխատուութեան համար որով պիտի վճարուի պատերազմական տուգանքը:

Այլեւայլ. Սերպիայէ կը ծանուցուի թէ խորհրդարանն անմիջապէս պիտի լուծուի երբ նոր վարչապետ Մ. Կեօրկիւիչ Պիկրասս վերադառնայ Կ. պոլսէ: Նախկին վարչապետ

Մ. Փասիչ ծանոց թէ պիտի հակառակի նոր նախարարութեան քաղաքականութեան — Պրազիլեան գործերը շատ ծանր հանգամանք մը առին Պատերազմական նախարարին մահէն ետեւ : Ռիօ Եանէյրոյէ կը հեռադրուի թէ Ազգային Ժողովին հաւանութեամբ պաշարման վիճակ հրատարակուած է, եւ թէ այդ վիճակի հրատարակումէն ետեւ Ծերակոյտի անգամ մը եւ քանի մը երեսփոխաններ ձերբակալուած են : — Վեսուվ լեռը բաւական սաստկութեամբ ժայթքել սկսած է : — Սերպիոյ կառավարութիւնը Ռուսիոյ Արտաքին գործերու նախարար Մուրապիէվ կոմսին ձերմակ Արծուի պատուանշան շնորհեց, Ռուսիոյ մէջ համակրութիւն շահելու փորձ մը կը համարուի այս : — Ուտելիքի մեծ նուազութիւն կայ կովկասի մէջ : Ժողովուրդը կը վախնայ որ վերահաս խիստ ձմեռը սով յառաջ պիտի բերէ : Բազմաթիւ գաւառացիներ սկսած են դէպի քաղաքներ շուրջ : — Չանկ Թուանկի մէջ ի Զին քանի մը Գերման միսիոնարներ սպանուած են : Ուստի Գերմանիա մարտանաւեր զրկած եւ հատուցում պահանջած է : Մարտանաւ զրկած է նաեւ Հայիթի կղզին, ուր Գերման հպատակ մը ապօրինաւորապէս բանտարկուած եւ ապա արտաքսուած է կղզւոյն կառավարութիւնէն :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ Սէլամըզի արարողութիւնէն ետեւ Իտալական դեսպան Մ. Փանցա պատիւ ունեցաւ ոչ-պաշտօնապէս վեհ. Սուրբանի ներկայանալու :

Հինգշաբթի Գերման դեսպան Պառոն Սաուրմա Եէլլ արեւելեան ձեւալեւծաց կառախըմով վիէննա ուղեւորեցաւ երթալու համար իր նոր պաշտօնատեղին Հոմո : Մինչեւ կայարան յուղարկ գացին վեհ. Սուրբանի եւ Բ. Դրան ներկայացուցիչներ եւ դեսպանական մարմինը :

Շաբաթ Գերմանական նորընտիր դեսպան Պառոն Մարչալ ֆոն Պիպերշթայն մայրաքաղաք ժամանեց արեւելեան ձեւալեւծացով Արարողութեանց զիւանէն Իպրահիմ պէյ դեսպանին ընդ առաջ գնաց մինչեւ Էտիրնէ բարի գալուստ մաղթել վեհ. Սուրբանին կողմէ : Իպրահիմ պէյի հետ էր Գերման դեսպանատան պաշտօնէտեղիներէն Մ. աբ կիս, որ Էտիրնէ գնաց նորընտիր դեսպանին տրամադրութեան տակ զնել ինքզինք : Սիրքէճի կայարանին մէջ Պառոն Մարչալի ընդ առաջ ելան Մեծ-Եպարքոսին եւ Արտաքին գործերու նախարարութեան կողմէ զրկուած պաշտօնեաներ, եւ Գերման դեսպանատան եւ հիւպատոսարանի պաշտօնէտեղիները :

Երկու շաբաթէ ի վեր գրեթէ անընդհատ տեղացող անձրեւը անցեալ չորեքշաբթի կէսօրուան մօտ յանկարծ ձիւնի փոխուեցաւ, եւ յաջորդ առաւօտ ամբողջ քաղաքը ձերմկեցաւ : Ձիւնը շարունակեց հինգշաբթի օրն ի բուն եւ ուրբաթ մինչեւ կէսօր : Միանգամայն սաստկացաւ ցուրտը, այնպէս որ կարծես ձմրան մէջտեղն էինք : Միեւնոյն ժամանակ հովը կատաղութեամբ կը փչէր եւ կ'աւելցնէր անհանգստութիւնն ամենուն եւ նեղութիւնն հազարաւորներու, որոնք յարմար պատրաստութիւն տեսած չէին ձմրան համար որ սովորաբար չսկսիր Յունվարէն առաջ : Հինգշաբթի հանրակառքերը (թրամուէյ) չբանեցան եւ վոսփորի եւ կղզիներու շոգենաւները մեծագոյն դժուարութեամբ կատարեցին իրենց երթեւեկը : Հե-

ռադրական թելեր խզուեցան եւ կառախուճներն ուշացան : Ուրբաթ կէսօրէն ետքը ձիւնը դադարեցաւ եւ հովն հարաւայինի դարձաւ : Անկէ ի վեր արեւ կ'երեւի, ցուրտը կը մեղմանայ եւ ձիւնը կը հալի :

Անատոլուի վերջին երկու տարիներու դժբախտ դէպքերուն եւ Օսմ. պետութեան նկատմամբ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ երեւցած հրատարակութիւններ ատենէ մը ի վեր Թուրք մամուլն զայրոյթը կը գրգռեն : Հիմա Նի-Երթ Հերբէլ յատուկ յանձնախումբ մը զրկած է Անատոլու սա նպատակաւ որ այդ յանձնախումբը իրողութիւններն իրոյն հանէ եւ մանաւանդ ցուցնէ թէ յիշեալ դժբախտ դէպքերուն պատասխանատուութիւնը որոնց կը պատկանի : Այդ յանձնախումբը կը բաղկանայ Պատ. ձորձ Հէփուրթիէ, որ քսան տարի առաջ Ժողովական բաւական համբաւեալ քարոզիչ մ'էր, եւ Նի-Երթ Հերբէլի Կ. պոլսոյ թղթակից Մր. Հուրթմընէ : Կայս. կառավարութիւնը խոստացած է ամէն զիւրութիւն ընծայել այդ յանձնախումբին, եւ կ'իմանանք թէ զինուորական եւ քաղաքային մէյմէկ պաշտօնատար եւ հարկաւոր պահակներ ընկերացուցած է անոր, որպէս զի աւելի ապահովի այս ուղեւորութեան նպատակը : Ինչպէս մայրաքաղաքիս Թուրք թերթերը նոյնպէս Ամերիկայի թերթերը բաւական կը հետաքրքրուին այն տեղեկագրին զոր այդ յանձնախումբը պիտի հրատարակէ Նի-Երթ Հերբէլի մէջ : Իհրամ, այս նիւթին վրայ կարգ մը Ամերիկեան թերթերէ քաղուածներ ընելէ ետեւ, կ'ըսէ : «Ահաւասիկ Ամերիկայի մէջ յառաջ եկած մեծ բարի ազդեցութիւնը առաջին նամակին, զոր Նի-Երթ Հերբէլի թղթակիցները գրած են մինչ դեռ Կ. պոլիս կը գտնուէին : Յանուն Օսմ. մամուլն, կը շնորհաւորենք մեր պաշտօնակիցը, որ սովոր է ճշմարտասիրաբար լուր հրատարակել, այն գործին համար զոր մարդկութեան եւ քաղաքակրթութեան մատուցանելու ձեռնարկած է :»

Աժուխի խնդիրն անցեալ շաբթու ծանր խնդիր մը եղաւ մայրաքաղաքիս բնակիչներուն համար : Երբ ցուրտը կոխեց, յանկարծ անհնար եղաւ փայտ եւ ածուխ գտնել առանց արտակարգ գիներ վճարելու : Ներքին գործերու նախարար Մէմտուհ փաշա փութով իր ուշադրութիւնն այդ խնդրոյն դարձուց քաղաքապետական պաշտօնատարներու խորհրդակցութեամբ, եւ Սէլանիկ, Իզմիր եւ Էտիրնէ հրամաններ զրկեց շուտով փայտ եւ ածուխ հասցնելու համար : Թաղապետական իշխանութիւններուն հրամայուեցաւ հոգ տանիլ որ ածխավաճառները 100 քաջ ածուխի համար 50 եւ փայտավաճառները 1 չէքի փայտի համար 25 դահէ աւելի չպահանջեն : Փոթորկին դադրելէն ետքը բաւական քանակութեամբ ածուխ եկաւ շոգեկառքով եւ ծովու ճամբով : Կը յուսացուի որ դարձեալ զինները չափաւորին : Գերմանիոյ Եւրամտական նախարարութեան առեւտրական ձիւղի խորհրդական Մ. Բաֆուս Մալիէի խորհրդական անուանուեցաւ :

Գերմանիայէ կը ծանուցուի թէ Պելկրատի Օսմ. դեսպան Թէվֆիգ փաշա Պերլինի Օսմ. դեսպան պիտի անուանուի առժամապէս փոխան Ղալիպ պէյի :

Մայրաքաղաքիս Սերպիական նախորդ դեսպան եւ այժմ Սերպիական վարչապետ Մ. Կէօրկէվիչ շաբաթ Պելկրատէ մայրաքաղաքս ժամանեց իր յետս կոչման գրերը մա-

տուցանելու համար : Սիրքէճի կայարանին մէջ ընդունուեցաւ վեհ. Սուրբանի թիկնապահ Սաատի փաշայէ եւ Մեծ-Եպարքոսին ու Արտաքին գործերու նախարարին կողմէ զրկուած պաշտօնեաներէ :

Կայս. մաքսատուններու վերատեսչութիւնը որոշած է հրամայել որ, առանց սպասելու սովորական ժամանակին անցնելուն, ծախուին կայս. մաքսատուններու մէջ մնացած եւ չփնտռուած ամէն այն նիւթեր որ դերաւ եւ շուտ կը մնասուին :

Յոյն աւազակներու դէմ Մանասթըրի կուսակալութիւնէն զօրքեր զրկուած էին Տիլգաթա եւ Տոմինիք : Այդ աւազակներն հալածելու գործը երկուքուկէս ամիս տեւեց, Անոնց խուճերը կազմալուծուեցան, եւ զինուորներն 130 հրացան եւ 17 սնտուկ հրանիւթ գրաւեցին, նաեւ ազատ արձակեցին 8 անձեր զորս այդ աւազակները լեռ տարած էին փրկանքի համար :

Երկրագործական դրամատան հասոյթները եւ ծախքերը Առեւտրական նախարար Մանուէլ ձէլալէտոյին փաշայի հսկողութեան ենթարկուեցան :

Հաշտութեան բանակցութիւնները մէկ երկու անգամ ընդհատուեցան որպէս զի Յոյն պատուիրակները կարենան հրահանգ խնդրել Աթենքէ : Բայց անցեալ չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ եւ երկուշաբթի ու երեքշաբթի Արտաքին գործերու պաշտօնատան մէջ գումարուներ տեղի ունեցան, եւ հաշտութեան դաշնագրին մնացեալ չորս յօդուածներուն վերաբերեալ վիճաբանութիւնը որոշ յառաջդիմութիւն մը ըրաւ :

Ատաբազարէ ցաւալի լուր մը կը հաղորդուի : Տեղւոյն Աւետ. Հայերու Ժողովատունը ձիւնին ծանրութեան չտոկալով փլեր եւ աւերակներու կոյտ մը եղեր է :

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Չկարծուի որ Յունաց Երեսփ. Ժողովին նորընտիր Նախագահին Տէրեանի կուսակցութիւնէն ըլլալը Մ. Չախիբի նախարարութեան զիրքին վրայ ազդեցութիւն մը ընէ : Նախարարութեան ոյժը պիտի փորձուի այն ատեն երբ Ժողովը ձեռնարկէ կարեւոր անօրինութիւն մը քուէարկել :

Յունական նախարարին անկատար ծովաուղիները զրկելու պատասխանատուութեան խնդիրը քննելու նպատակաւ Աթենքի մէջ կազմուած յանձնաժողովը յանձնարարեց պաշտօնանկ ընել Բափոփուլո հարիւրապետը եւ զինուորական ատեանի առջեւ դատել Անասթասիոս ճարտարագէտը :

Ֆրանսական Ծերակոյտի անդամներէն Մ. Շէօրէ Բէսթիէ կը յայտարարէ թէ Տրէյֆիւս հարիւրապետին անմեղութեան վերաբերեալ ապացոյց տուած է Պատերազմական նախարարին : Ֆրանսական կառավարութեան յայտարարութիւնը թէ նոր դատի հրաման տալու պատճառ չկայ յայտնի է որ բաւական պիտի չհամարուի խնդիրը վերջացնելու համար :

Եւրոպայի մէջ շատ մեկնութիւն կը արուի այն այցելութեան, զոր Գերմանիոյ Արտաքին գործերու նախարարը տուաւ Պապին : Կ'ըսուի թէ այդ տեսակցութիւնը շատ սիրալիր եղած է երկու կողմէ ալ :

ԱՁԴ

Պարտիզակի մանկանոցը լեցուն է : Նոր զիմուներ չեն կրնար ընդունուիլ :

ԳՐԱՄԱԿԱՆ

Նոյեմբեր 6/18, 1897

Գոնուրիտ	24 9		
Բուժելիք Երկաթուղի	113 23		
ԳՐԱՄ. ՕՍՄ. ՆԱԿԻՆ 100Է			
Մէճիտիյէ	107 32	Ռուսիոյ բՄԼ	89 30
Մէթալիք	97 30	Նաբոլէան	87 10
Պէշիք	102 20	Գրեմից	51 7
Ալթուլէ	103 40	Մեքչ. ռոկի	109 38
Մանր արժամ	103 20	Մանէթ թղթ.	8 54

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԻՏՈՒՆՆԵՆ Ա. ՅԱՎՈՒ ՊՈՅՈՒՆՆԵՆ

Ֆինանսայար Եպարք. Ամերիկայի Խան